

„Գյոււմրու Բժշկական Կենտրոն”
Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.

Երևան

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7-8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություններ	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10-11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12-30

31 08 2021

№ 032112

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն



Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

„Գյումրու Բժշկական Կենտրոն” ՓԲԸ բաժնետերերին և ղեկավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է „Գյումրու Բժշկական Կենտրոն” ՓԲԸ-ի (Ընկերության) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրարեւի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը,

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հնկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հնկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հնկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Մկրտչյան

31.08.2021թ.



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2020	2019
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,	1	4,832,537	4,908,181
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ՝ փոխառություններ	3	31,836	700
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,864,373	4,908,881
Ընթացիկ ակտիվներ			
Ջուտ պաշարներ	2	124,143	92,943
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով		154,196	122,786
Տրված կանխավճարներ	3	2,379	1,886
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	13,970	11,875
Այլ ընթացիկ ակտիվներ	4	447	18
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		295,135	229,508
ՀԱՇՎԵԿՇԻՈՒ		5,159,508	5,138,389
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ			
Սեփական միջոցներ			
Բաժնետիրական կապիտալ	13	3,859,300	3,859,300
Չբաշխված շահույթ		-627,236	-575,590
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություն		538,416	585,237
Սեփական կապիտալի այլ տարրեր		2,865	2,865
Ընդամենը սեփական միջոցներ		3,773,345	3,871,812
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	14	192,313	59,554
Ակտիվներին վերաբերող շնորհներ և այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում հետաձգված հարկային պարտավորություն	12	727,270	864,836
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		919,583	924,390
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	14	82,838	16,706
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով		190,932	161,069
Ստացված կանխավճարներ		0	0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	6	33,498	26,150
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	7	52,645	32,358
Եկամուտներին վերաբերող շնորհներ և այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում պահուստներ	7, 12	106,667	105,904
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		466,580	342,187
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,386,163	1,266,577
ՀԱՇՎԵԿՇԻՈՒ		5,159,508	5,138,389



Գլխավոր հաշվապահ՝
 Լ.Խաչատրյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների
 մասին հաշվետվություն /Ըստ ծախսերի գործառույթի/
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)		
	Ծանոթագրություն	2020	2019
Համախառն գործառնական հասույթ		1,579,986	1,686,806
Իրացված ապրանքների և ծառայությունների ինքնարժեք		-1,744,483	-1,626,315
Համախառն շահույթ		-164,497	60,491
Այլ գործառնական եկամուտ	9	32,372	13,797
Իրացման ծախսեր		-374	-508
Վարչական ծախսեր	8	-140,987	-132,869
Այլ գործառնական ծախսեր	9	-12,233	-87,442
Այլ ոչ գործառնական օգուտ (վնաս)	10	149,170	153,735
Շահույթ՝ նախքան հարկումը		-136,549	7,204
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում Զուտ շահույթ	11	38,082	-101,630
		-98,467	-94,426

Տնօրեն՝ Ա.Բասահակյան



31.08.2021թ.

Գլխավոր հաշվապահ՝
 Լ.Խաչատրյան

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների
 մասին հաշվետվություն /Ըստ ծախսերի բնույթի/
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)

	2020	2019
Համախառն գործառնական հասույթ	1,579,986	1,686,806
Այլ եկամուտ	199,167	177,767
Պատրաստի, անավարտ արտադրանքի և ապրանքների պաշարների փոփոխություններ	0	0
Օգտագործված հումք և նյութեր	477,317	481,709
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	942,646	888,208
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	232,958	143,657
Ֆինանսական ծախսեր	16,087	10,235
Այլ ծախսեր	246,693	333,560
Ընդամենը ծախսեր	1,915,701	1,857,369
Շահույթ՝ նախքան հարկումը	-136,549	7,204
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	38,082	-101,630
Զուտ շահույթ	-98,467	-94,426

Տնօրեն՝ Ա.Խաչատրյան



31.08.2021թ.

Գլխավոր հաշվապահ՝
 Լ.Խաչատրյան

**Ջուտ ակտիվներում փոփոխությունների մասին
հաշվետվություն**
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	Չբաշխված շահույթ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
Մնացորդ՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 834 900		-481 164	2 865	3 356 601
Բաժնետիրական Կապիտալի ավելացում/պակասեցում	24 400				24 400
Վերագնահատումից տարբերություններ		585 237			585 237
Ջուտ շահույթ/(վնաս) 2019թ. համար			-94 426		-94 426
Սեփական կապիտալի այլ տարրեր/ներքին տեղաշարժ/շահաբաժնի վճարում					0
Մնացորդ՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 859 300	585 237	-575 590	2 865	3 871 812
Բաժնետիրական Կապիտալի ավելացում/պակասեցում					
Վերագնահատումից տարբերություններ		-46 821			-46 821
Ջուտ շահույթ/(վնաս) 2020թ. համար			-98 467		-98 467
Սեփական կապիտալի այլ տարրեր/ներքին տեղաշարժ/շահաբաժնի վճարում			46 821		46 821
Մնացորդ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 859 300	538 416	-627 236	2 865	3 773 345

Տնօրեն՝ Ա.Բասիսյան



Գլխավոր հաշվապահ՝
Լ.Խաչատրյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2020	2019
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ջուտ շահույթ(վնաս)	-98,467	-94,426
Ծախս՝ շահութահարկի գծով/փոխհատուցում	-38,082	101,630
Շահույթ՝ նախքան հարկումը	-136,549	7,204
<i>ճշգրտումներ՝</i>	232,959	143,657
Մաշվածություն	232,959	143,657
Վերազնահատումներից և վերաչափումներից		
Այլ ճշգրտումներ		
Դեբիտորական պարտքերի և այլ ընթացիկ ակտիվների՝ (աճ)/նվազում	-32,332	-18,458
Պաշարներ՝ (աճ)/նվազում	-31,200	542
Կրեդիտորական պարտքեր՝ աճ/(նվազում)	58,261	-28,812
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	91,139	104,133
Ծախս՝ շահութահարկի գծով/փոխհատուցում	38,082	-101,630
<i>Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</i>	129,221	2,503
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերում/օտարում	-157,315	63,833
Ոչ ընթացիկ այլ ակտիվների՝ (աճ)/նվազում	-31,136	0
<i>Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</i>	-188,451	63,833
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Փոխառությունների և վարկերի (վճարում)/ստացում	198,891	-3,740
Ֆինանսական այլ մուտքեր/ելքեր/դրամաշնորհներ	-137,566	-54,820
<i>Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</i>	61,325	-58,560
Շահաբաժինների վճարում և այլ ճշգրտումներ		
<i>Ջուտ աճ/նվազում դրամական միջոցներում և դրանց համարժեքներում</i>	2,905	7,776
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում</i>	11,875	4,099
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում</i>	13,970	11,875



Գլխավոր հաշվապահ՝
 Լ.Խաչատրյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար /ուղղակի մեթոդ/

	(հազար դրամ)	
	2020	2019
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	-25 174	53 070
Մուտքեր՝ Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից	1 569 133	1 683 834
Մուտքեր՝ գործառնական այլ գործունեությունից	2 274	3 295
Վճարումներ՝ նյութերի, աշխատանքների և ծառայությունների գծով	637 196	681 033
Վճարումներ՝ աշխատակիցներին և նրանց անունից	704 595	645 466
Վճարումներ՝ հարկերի և սոցիալական վճարների գծով	249 764	281 283
Վճարումներ՝ գործառնական այլ գործունեության գծով	5 026	26 277
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	-51 983	-34 203
Մուտքեր՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից	2 098	828
Մուտքեր՝ տրված փոխատվությունների մարումից	600	2 500
Մուտքեր՝ ներդրումային այլ գործունեությունից		
Վճարումներ՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	22 945	37 531
Վճարումներ՝ տրված փոխատվությունների գծով	31 736	
Վճարումներ՝ ներդրումային այլ գործունեության գծով		
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	79 252	-11 091
Մուտքեր՝ սեփական կապիտալի գործիքների թողարկումից		
Մուտքեր՝ փոխառությունների և վարկերի ստացումից	149 000	
Մուտքեր՝ ֆինանսական այլ գործունեությունից		
Վճարումներ՝ վարկերի և փոխառություններ մարման գծով	56 262	1 293
Վճարումներ՝ տոկոսների մարման գծով	13 486	9 798
Վճարումներ՝ շահաբաժինների մարման գծով		
Վճարումներ՝ ֆինանսական այլ գործունեության գծով		
Դրամական միջոցների զուտ հոսքեր	2 095	7 776
Արտարժույթային միջոցների փոխարժեքային տարբերություններ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	11 875	4 099
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13 970	11 875
*Տեղեկանք		
Ընդամենը՝ համախառն մուտքեր	1 723 105	1 690 457
Ընդամենը՝ համախառն վճարումներ	1 721 010	1 682 681



[Handwritten signature]

Գլխավոր հաշվապահ՝
 Լ.Խաչատրյան *[Handwritten signature]*

շրջանակներում վերակազմակերպել է «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր», «Գյումրու ծննդատուն» և «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերությունները՝ վերջիններս միացնելով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը, որոնց միաձուլման գծով գործընթացները ընթացքում են:

20. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել է հրապարակման համար 31 օգոստոսի 2021թ.:

Տնօրեն

Ա.Իսահակյան

Գլխ.հաշվապահ

Լ.Խաչատրյան



(Handwritten signatures in blue ink)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ -ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա ստեղծված փակ բաժնետիրական ընկերություն է այն կազմավորվել է «Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲԸ-ի միաձուլման հիման վրա՝ 23.11.2012 թվ: Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Շիրակի մարզ, Ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3
- Կազմակերպությունը իրականացնում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրված թիվ Կ-ԲՕ-001761 լիցենզիայի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ
- Կազմակերպության աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31 դեկտեմբեր 2020 թվ -ին կազմել է 465 հոգի
- Կազմակերպության միակ հիմնադիր բաժնետերը հանդիսանում է Շիրակի մարզպետարանը

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են : Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեյի(ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեյի (ՄՄԿ) մեկնաբանություններից

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն

2.2. Ճանաչման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարացիայի համոզմամբ՝ այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4. Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության դեկլարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

2.5. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

* ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (վերանայված 2014թ. հուլիսին) ստանդարտը ուժի մեջ է 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Ստանդարտը փոխարինում են «Ֆինանսական գործիքներ ճանաչումը և չափում» ՀՀՄՍ 39-ին:

ՖՀՄՍ 9-ի ներուծում է նոր պահանջներ. ա/ ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների դասակարգման ու չափման պահանջների, բ/ արժեզրկման մեթոդոլոգիայի, և գ/ հեղջի ընդհանուր հաշվառման վերաբերյալ:

* 2014թ.-ի մայիսին թողարկվել է ՖՀՄՍ 15-ը, որը ներկայացնում մեկ ամբողջական մոդել հաճախորդների հետ տարբեր պայմանագրերից հասույթի ճանաչման համար: ՖՀՄՍ 15-ը փոխարինում է ՀՀՄՍ-18 «Հասույթ», ՀՀՄՍ-11 «Կառուցման պայմանագրեր», ՖՀՄՍԿ-13 «Հաճախորդների հավատարմության ծրագրեր», ՖՀՄՍԿ-15 «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր», ՖՀՄՍԿ-18 «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» և ՄՄԿ-31 «Հասույթ. արտերախիմ գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» հրապարակումներին: ՖՀՄՍ 15-ի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ ճանաչված հասույթը պետք է արտացոլի այն հատուցումը, որը ստանալու իրավունք ակրնկալվում է ունենալ փոխանցված ապրանքների և ծառայությունների դիմաց: Ստանդարտում ներկայացված է հասույթի ճանաչման հետևյալ 5 աստիճան սխեման. Քայլ 1 – Որոշակիացնել հաճախորդի հետ պայմանագիրը (պայմանագրերը), Քայլ 2 – Որոշակիացնել պայմանագրի կատարման պարտականությունները, Քայլ 3 – Որոշել գործարքի գինը, Քայլ 4 – Բաշխել գործարքի գինը կատարման պարտականություններին, Քայլ 5 – Ծանաչել հասույթ ըստ կազմակերպության կողմից կատարման պարտականությունների կատարման: ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2017թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

* ՖՀՄՍ1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Բացահայտումներ

- Ա) Էականություն և միավորում Կատարվել է պարզաբանում այն մասին, որ կազմակերպությունը չպետք է ներփակի օգտակար տեղեկատվությունը, ցուցանիշների առանձին ներկայացմամբ կամ միավորմամբ, և որ էականությունը հավասարապես վերաբերում է և հիմնական հաշվետվություններին և կից ծանոթագրություններին: Սա նշանակում է, որ որևէ ՖՀՄՍ-ով պահանջվող բացահայտումը պետք է կատարվի ծանոթագրություններում միայն այն դեպքում, երբ դա համարվում է հաշվետվություն օգտագործողների համար էական:
- Բ) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
- Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն Կատարվել է փոփոխություն այն մասին, որ նշված հաշվետվություններում ներկայացման ենթակա պարտադիր տողային հոդվածներում կարող են կատարվել փոփոխություններ տողերի միավորման կամ բաժանման ձևով՝ ելնելով

էականությունից: Նաև կատարվել է լրացուցիչ պարզաբանում այն իրավիճակների համար, երբ կազմակերպությունը ցանկանում է ներկայացնել միջանկյալ հանրագումարներ:

- Գ) Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից առաջացող այլ համապարփակ եկամուտների և այլ համապարփակ ծախսերի ներկայացումը Այս լրացումը պահանջում է այլ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում առանձին 2 տողերով ներկայացնել բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից առաջացած այլ համապարփակ եկամուտներն ու ծախսերը: Դրանցից մեկում ներկայացվում է այն հոդվածների հանրագումարը, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու շահույթին կամ վնասին, իսկ երկրորդում այն, որոնք ենթակա են վերադասակարգման շահույթին կամ վնասին
- Դ) Ծանոթագրություններ Այս լրացումը կազմակերպություններին տալիս ավելի շատ ճկունություն ծանոթագրությունների կառուցվածքի վերաբերյալ: Այնուամենայնիվ ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի կանոնակարգված, և ներկայացվում են որոշակի ուղեցույցներ կանոնակարգման վերաբերյալ: Լրացումը ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ՖՀՄՍ 9-ի թողարկումը արտացոլում է ՀՀՄՍԽ-ի աշխատանքների առաջին փուլը ՀՀՄՍ 39-ը փոխարինելու ուղղությամբ և կիրառվում է ՀՀՄՍ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման նկատմամբ՝ ներառյալ հեջավորման հաշվառումը: Անավարտ փուլերում են գտնվում ֆինանսական ակտիվների արժեզրկման, դասակարգման ու չափման վերաբերյալ որոշ պահանջներում փոփոխությունները: Նոր ստանդարտը ուժի մեջ մտնելու ժամկետը սկզբնապես նախատեսված էր 2015թ. հունվարի 1-ը: Ներկայումս պարտադիր կիրառման ամսաթիվ չի նախատեսվում և ՀՀՄՍԽ-ում քննարկվում է ՖՀՄՍ 9-ի պարտադիր կիրառումը մինչև 2017թ. հունվարի 1-ը հետաձգելու հարցը:

* ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ՖՀՄՍ 9-ի թողարկումը արտացոլում է ՀՀՄՍԽ-ի աշխատանքների առաջին փուլը ՀՀՄՍ 39-ը փոխարինելու ուղղությամբ և կիրառվում է ՀՀՄՍ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման նկատմամբ՝ ներառյալ հեջավորման հաշվառումը: Անավարտ փուլերում են գտնվում ֆինանսական ակտիվների արժեզրկման, դասակարգման ու չափման վերաբերյալ որոշ պահանջներում փոփոխությունները: Նոր ստանդարտը ուժի մեջ մտնելու ժամկետը սկզբնապես նախատեսված էր 2015թ. հունվարի 1-ը: Ներկայումս պարտադիր կիրառման ամսաթիվ չի նախատեսվում և ՀՀՄՍԽ-ում քննարկվում է ՖՀՄՍ 9-ի պարտադիր կիրառումը մինչև 2017թ. հունվարի 1-ը հետաձգելու հարցը:

* Փոփոխություններ „Հիմնական միջոցներ” ՖՀՄՍ 16 և „Ոչ նյութական ակտիվներ” ՖՀՄՍ 38-ում, „Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների վերաբերյալ պարզաբանում” (հրապարակվել է 2014 թ մայիսին) ուժի մեջ է 2016 թվ հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլտվությամբ: Այս փոփոխության համաձայն արգելվում է եկամտի վրա մեթոդի կիրառմամբ մաշվածության հաշվարկը:

3.2 ԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	75 տարի
Կառուցվածքներ	20 տարի
Համակարգիչներ	1 տարի
Տրանսպորտային միջոցներ	7-10 տարի
Այլ սարքավորումներ	7-20 տարի
Բժշկական սարքավորումներ	7-20 տարի
Արտադրական գույք, գործիքներ	8 տարի

3.3. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Կազմակերպության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4. Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների

ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը և ներառում է պաշարների
ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ
Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից
ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ,
երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են
երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման
ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են
իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն
ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես
դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական
պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք
սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը
ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ
կատեգորիաների՝

- դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր
կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան
համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե
իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն
համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն
սեփական կապիտալում: Ընդհանուր առմամբ, Կազմակերպության բոլոր ֆինանսական
ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը:
Ֆինանսական ակտիվի արժեքը կամ գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր
հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և
եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝
համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

1. Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական
ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Ընթացիկ դեբիտորական պարտքերը
սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են
ամորտիզացված արժեքով՝ հանած արժեքը կամ պահուստը: Առևտրային դեբիտորական
պարտքերի արժեքը կամ պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց,
որ Կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել

վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

2. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

4. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.6. Արժեզրկում

Հիմնական միջոցների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը իրացման գուտ արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով: Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.7. Մեփական կապիտալ

Կազմակերպության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8. Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների

համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու՝ կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Կազմակերպությունը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.9. Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ, երբ վարձատուն է կրում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված էական ռիսկերը և օգուտները: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Վարձակալված ակտիվների վրա կատարված կապիտալ լնջումների ծախսերը ճանաչվում են որպես ակտիվ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հիմնական միջոցներ» դասում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման

3.10. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

3.11 Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի.

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ քույրատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՍՍ 2 «Պաշարներ» և ՀՀՍՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ.

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

3.12 Պահուստներ

Պահուստ ճանաչվում է, երբ որպես անցյալ դեպքի արդյունք, Կազմակերպությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը կատարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստը չափվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի զեղչմամբ՝ օգտագործելով մինչև հարկումը այնպիսի դրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և տվյալ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականը: Ժամանակ անցնելուն զուգընթաց պահուստի գծով զեղչի հետպտույտը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ								
(հազար դրամ)								
	Շենքեր և կառուց.	Մեքենա սարքավորումներ և Բժշկական սարքավորումներ	Տրանսպ. միջոցներ	Արտադր. գույք, տնտեսական գույք, գործիքներ	Ոչ նյութական ակտիվներ և այլ հիմնական միջոցներ	Հողամաս	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	Ընդամենը
Շահագործման մեջ գտնվող ակտիվներ								
Ակտիվի սկզբնական արժեք								
Նախորդ տարվա վերջին տվյալները	3836870	2034727	14593	303434	4359	25539	12437	6231959
Ավելացում	15875	18458	0	5026	0	0	118000	157359
Վերագնահատում ից արժեքի ան								0
Օտարում	0	-50	-11337	0	0	0	0	-11387
Ընթացիկ տարվա վերջի տվյալները	3852745	2053135	3256	308460	4359	25539	130437	6377931
Մաշվածություն								
Սկզբնական մնացորդ	270730	842067	14593	193494	2894		0	1323778
Կուտակված մաշվածություն և ամորտիզացիա	42412	165919	0	20324	351		3953	232959
Օտարումներ	0	-6	-11337	0	0		0	-11343
Վերջնական մնացորդ	313142	1007980	3256	213818	3245	0	3953	1545394
Զուտ հաշվեկշռ. արժեք								
Նախորդ տարվա վերջ	3566140	1192660	0	109940	1465	25539	12437	4908181
Ընթացիկ տարվա վերջ	3539603	1045155	0	94642	1114	25539	126484	4832537

2. ԶՈՒՏ ՊԱՇՏԱՐՆԵՐ

<i>(հազար դրամ)</i>		
Անվանումը	2020	2019
Դեղորայք, այդ թվում հումանիտար և բուժ.պարագաներ	114,364	84,267
Վառելիք	807	784
Տնտեսական նյութեր և շինանյութ	8,972	7,892
Ընդամենը	124,143	92,943

3. ՏՐՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ և ՓՈԽԱՏՎՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

<i>(հազար դրամ)</i>		
Անվանումը	2020	2019
Կանխավճարներ՝ նյութեր և ծառայությունների ձեռք բերելու համար	2,379	1,886
Տրված փոխատվություններ	31,836	700
Ընդամենը	34,215	2,586

*** 31,287 հազ դրամը վերաբերվում է Գյումրու Ծննդատուն ՓԲԸ-ին տրված անտոկոս փոխատվության գումարն է

4. ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ՝ Այդ թվում բյուջեյի գծով

<i>(հազար դրամ)</i>		
Անվանումը	2020	2019
Դեբիտորական պարտքեր՝ այլ եկամուտների գծով	447	18
Ընդամենը	447	187

5. ԴՐԱՍԱԿԱՆ ՍԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐ

<i>(հազար դրամ)</i>		
Անվանումը	2020	2019
Դրամական միջոցներ՝ դրամարկղում	11,682	3,470
Դրամական միջոցներ՝ բանկային հաշիվներում	2,288	8,405
Ընդամենը	13,970	11,875

6. ԿԱՐՃԱԺԱՍԿԵՏ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԲՅՈՒՋԵԻ ԳԾՈՎ

<i>(հազար դրամ)</i>		
Անվանումը	2020	2019
Շահութահարկի գծով	2,651	891
Եկամտային հարկի գծով	27,227	23,341
ԱԱՀ-ի գծով	274	259
Գույքահարկի և հողի հարկի գծով	8	-18
Կուտակային վճարի գծով	2,270	803
Այլ պարտադիր վճարների գծով	1,068	874
Ընդամենը	33,498	26,150

7. ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանումը	(հազար դրամ)	
	2020	2019
Արձակուրդային պահուստ	76,828	95,255
Աշխատավարձի և այլ ընթացիկ պարտավորություններ	52,645	32,358
Հաշվեգրված տոկոսներ	1,898	147
Ընդամենը	131,371	127,760

8. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Անվանումը	(հազար դրամ)	
	2020	2019
Աշխատավարձի գծով ծախսեր	107,484	95,013
Փոստային և հաղորդակցության ծախսեր	2,209	1,304
Գրասենյակային ծախսեր	1,214	973
Խորհրդատվական ծախսեր	1,380	3,673
Բանկային ծախսեր	1,868	489
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	3,681	3,829
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,148	1,498
Հիմնական միջոցների մաշվածություն	4,507	1,702
Այլ ծախսեր	16,496	24,388
Ընդամենը	140,987	132,869

9. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՕԳՈՒՏ (ՎՆԱՍ)

Անվանումը	(հազար դրամ)	
	2020	2019
Գույքային կորուստների գծով ծախսեր	-585	-16,498
Վարձակալությունից	8,587	9,611
Վնասի հատուցումից և էլեկտրաէներգիայի փոխհատուցումից	4,652	4,178
Տույժ, տուգանքներ	-11,586	-1,683
Պահուստների հակադարձումից	18,425	-59,466
Հիմնական միջոցների լուծարման ծախսեր	-44	-9,564
Այլ գործառնական եկամուտներ	708	8
Այլ գործառնական ծախսեր	-18	-231
Ընդամենը	20,139	-73,645

10. ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՕԳՈՒՏ (ՎՆԱՍ)

(հազար դրամ)

Անվանումը	2020	2019
Հետաձգված/շտրհ/եկամուտներ	164,143	163,970
Անհատույց տրված ակտիվներ/օգնություն/ծախս	-1,538	-2
Անհատույց տրված ակտիվներ/օգնություն/եկամուտ	985	-
Ֆինանսական ծախս	-16,087	-10,233
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ	1,667	-
Ընդամենը	149,170	153,735

11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Համաձայն «Հարկային օրենսգրքի», շահութահարկը հաշվարկվում է 18% դրույքաչափով: Ընկերությունը 2020թ. «Շահութահարկի հաշվարկի» համաձայն հարկման ենթակա շահույթ չունի: Հարկային վնասը կազմում է 88,207 հզ դր: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկի գծով ծախսերից`

Անվանումը	2020	2019
Շահույթ մինչև հարկում	-88,207	31,844
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	-3,717
Հետաձգված շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/	38,082	-97,913
Ընդամենը` Շահութահարկի գծով ծախս	38,082	-101,630
Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույք %	-43,17	-319,14

12. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետաձգված ակտիվների և պարտավորությունների մնացորդները

Անվանումը	2020	2019
Հետաձգված հարկային պարտավորությունների մնացորդը տարեսկզբին	238,090	140,177
Հետաձգված շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում/	-38,082	97,913
Հետաձգված հարկային պարտավորությունների մնացորդը տարեվերջին	200,008	238,090

• Ակտիվներին վերաբերող շնորհներ/Հետաձգված եկամուտ/

Անվանումը	2020	2019
Ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդը տարեսկզբին	626,746	711,239
Ակտիվներին վերաբերող շնորհների ստացում	5,972	1,486
Ակտիվներին վերաբերող շնորհների վերագրում եկամուտներին	105,456	85,979
Ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդը տարեվերջին	527,262	626,746

• Եկամուտներին վերաբերող շնորհներ/Հետաձգված եկամուտ/

Անվանումը	2020	2019
Եկամուտներին վերաբերող շնորհների մնացորդը տարեսկզբին	10,502	40,295
Եկամուտներին վերաբերող շնորհների ստացում	76,127	41,742
Եկամուտներին վերաբերող շնորհների վերագրում եկամուտներին	58,688	71,535
Եկամուտներին վերաբերող շնորհների մնացորդը տարեվերջին	27,941	10,502

• Պահուստներ/Զօգտագործված արձակուրդային պահուստներ/

Անվանումը	2020	2019
Զօգտագործված արձակուրդային պահուստների մնացորդը տարեսկզբին	95,253	35,787
Ավելացում	-	59,466
Պակասեցում	18,425	-
Զօգտագործված արձակուրդային պահուստների մնացորդը տարեվերջին	76,828	95,253

13. ԿԱՊԻՏԱԼ

2020 թվ հայտարարված բաժնեմասերը կազմում է 38,593 բաժնետոմս ,յուրաքանչյուրը՝ 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով ,որի միակ բաժնետերը ՀՀ կառավարությունն է ի դեմս ՀՀ Շիրակի մարզպետի/լիազորված մարզպետ/:

14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանումը	2020	2019
Համախառն վարկային պատավորություններ		
-այդ թվում երկարաժամկետ մաս	164,777	68,076
-այդ թվում կարճաժամկետ մաս	101,572	54,125
Համախառն ֆինանսական վարձակալության գծով պատավորություններ		
-այդ թվում երկարաժամկետ մաս	110,374	8,184
-այդ թվում կարճաժամկետ մաս	90,741	5,429
	19,633	2,755

Ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերը կազմում են 2019 թվ համար՝ 20,294 հազ դրամ, իսկ 2020 թվ՝ 70,684 հազ դրամ: Վարկերի գծով ֆինանսական պարտավորությունները ներգրավվել են Ակբա բանկից, իսկ ֆինանսական լիզինգի գծով պատավորությունները Ագբա լիզինգ կազմակերպությունից լիզինգի առարկա հանդիսացել է բժշկական նորագույն սարքավորումներ:

15. ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Նշված ֆինանսական պարտավորությունների հիմնական նպատակը հանդիսանում է Ընկերության գործառնությունների ֆինանսավորումը: Ընկերությունն ունի առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ու դրամական միջոցներ, որոնք առաջանում են Ընկերության գործառնական գործունեության ընթացքում: Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունն ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- շուկայական ռիսկ
- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ

Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը: Ընկերությունը վերահսկող մարմին չի ստեղծել, որը պատասխանատու կլիներ ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունի ռիսկերի կառավարման որոշակի քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել Ընկերության գործունեության անընդհատությունը և դրա արդյունավետությունը: Ղեկավարությունը հավաստիացած է, որ Ընկերության ֆինանսական ռիսկերի հետ կապված գործունեությունն իրականացվում է համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, իսկ ֆինանսական ռիսկերի սահմանումը և զնահատումը և դրանց կառավարումն իրականացնում է Ընկերության վրա ռիսկ ընդունելու պատրաստակամության համաձայն: Քաղաքականության համաձայն Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ:

• Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի ռիսկը և արժուրային ռիսկը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

• **Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոփոխելով վերջիններիս իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքների դեպքում) և դրամական միջոցների արտահոսքերը տոկոսի վճարման գծով (փոփոխուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքների դեպքում): Թեև Ընկերությունը չունի տոկոսադրույքի ռիսկի կառավարման գծով մշակված քաղաքականություն, սակայն տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում առաջացող ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունը վերցնում է ֆիքսված տոկոսադրույքով վարկեր և փոխառություններ: Ընկերության փոխառություններն անտոկոս են: Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը վարկեր չի վերցրել:

• **Արժուքային ռիսկ**

Արժուքային ռիսկը արտարժույթի փոխարժեքային փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է: Արժուքային ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված իրացումների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Այդ գործարքները ամբողջությամբ արտահայտված են Ընկերության ֆունկցիոնալ արժույթով (ՀՀ դրամով) և հետևաբար Ընկերությունը արժուքային ռիսկի ենթարկված չէ:

• **Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի և առկա դրամական միջոցների մնացորդների գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Անվանումը	2020	2019
Առևտրային դեբիտորական պարտքեր	154,196	122,786
Դրամական ակտիվներ	13,970	11,875
Ընդամենը	168,166	134,661

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկը Ընկերության կողմից վերահսկվում է կանոնավոր կերպով, յուրաքանչյուր հաճախորդի հետ սերտ համագործակցության միջոցով՝ հաշիվներ ներկայացնելու և գումարներ զանձելու նկատմամբ հետևողականության դրսևորման ճանապարհով: Առևտրային դեբիտորական պարտքերը գրավով ապահովված չեն: Առևտրային դեբիտորական պարտքերի առավելագույն մարման ժամկետը 33 օր է:

• **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն իրենից ներկայացնում է Ընկերության կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման հետ կապված դժվարություններ, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Համաձայն Ընկերության իրացվելիության կառավարման քաղաքականության՝ ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու նպատակով բանկային հաշիվներում և դրամարկղում պահվում են բավարար

միջոցներ, ինչպես նաև, բարձր իրացվելի այլ ակտիվներ՝ ինչը հնարավորություն կտա խուսափել
 Ընկերության համար անընդունելի կորուստներ կրելուց և Ընկերության բարի համբավը վտանգելուց:
 Ստորև ներկայացվում է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով
 պայմանագրային մնացյալ մարման ժամկետները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի
 ազդեցության: Ընկերության ղեկավարությունն ակնկալում է, որ ժամկետայնության վերլուծությունում
 ներառված դրամական միջոցների հոսքերը չեն կարող տեղի ունենալ շատ ավելի վաղ ժամկետներում
 կամ շատ ավելի տարբեր գումարներով:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում
 ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամական հոսքերը, մասնավորապես դրամական միջոցները
 և դրանց համարժեքները, ինչպես նաև առևտրային դեբիտորական պարտքերը: Հաշվետու ամսաթվի
 դրությամբ Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը
 գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերին:

16. Իրական արժեք

Ղեկավարության կարծիքով Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների
 իրական արժեքները հավասար է դրանց հաշվեկշռային արժեքներին:

17. Կապիտալի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որպեսզի ապահովի Ընկերության կարողությունը
 շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում: Ընկերությունը չունի կապիտալի
 կառավարումը կարգավորող մշակված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է
 ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և երկարաժամկետ
 պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու
 համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության
 հասույթի և ծախսերի շարունակական վերահսկման միջոցով: Կապիտալի կառավարման առավել
 իրատեսական բնութագրիչ է հանդիսանում ֆինանսական լծակի (ընդհանուր կապիտալը
 բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա) ցուցանիշը՝

Անվանումը	2020	2019
ա) Սեփական կապիտալի մնացորդը	3,773,345	3,871,812
բ) Հանած՝ դրամական ակտիվների մնացորդ	13,970	11,875
գ) Կապիտալ / ա-բ/	3,759,375	3,859,937
դ) Սեփական կապիտալի մնացորդը	3,773,345	3,871,812
ե) Վարկեր, փոխառություններ և այլ ֆինանսական պարտավորություններ	275,151	76,260
զ) Ընդամենը ֆինանսավորում /դ+ե/	4,048,496	3,948,072
Ֆինանսական լծակի գործակից /զ : գ/	0,93	0,98

18. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը և ղեկավար անձնակազմի անդամները,
 ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք: Ընկերությունն իր գործունեության ընթացքում
 իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված
 գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Գործարքներ վերադաս դեկավարության հետ
 Ստորև ներկայացված է վարչական ծախսերում և ծառայությունների ինքնարժեքում ներառված վերադաս դեկավարության հետ գործարքների մանրամասները.

Անվանումը	2020	2019
Աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ՝ տնօրենին	16,897	14,996
Ընդամենը	16,897	14,996

բ) Գործարքներ բաժնետերերի և հիմնադիրներին փոխկապակցված այլ անձանց հետ, բացի ընթացիկ գործառնություններից որևէ այլ բնույթի գործարքներ չի իրականացվել

19. Պայմանական դեպքեր

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից ,որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է ավելի քան 5 տարի: Այս փաստերը ՀՀ-ում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է ,որ իրատեսորեն է գնահատել հարկային պարտավորությունները ՀՀ հարկային օրենսդրության ,պաշտոնական պարզաբանումների և նախադեպային դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ իրավասու մարմինների տարբերվող մեկնաբանությունների պարագայում հետևանքները կարող են էական լինել սույն ֆինանսական հաշվետվությունների համար:

Ապահովագրություն

ՀՀ ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում և ապահովագրության շատ տեսակներ դեռևս կիրառելի չեն մեր երկրում: Կազմակերպությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման ,ակտիվների կորստի որոնք կարող են առաջանալ կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարներից և ֆորս մաժորային այլ դեպքերից: Քանի դեռ կազմակերպությունը ապահովագրված չէ ,գույություն ունի ռիսկ ,որ որոշակի այլ ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա

Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ, կազմակերպությունը ինվազիվ բժշկական ծառայությունների պարտքերի գծով ունեն դատական հայցեր գումարների բռնագանձման վերաբերյալ: Միաժամանակ համաձայն ՀՀ կառավարության 17.11.2020 թվականի թիվ 1805-Ն որոշման Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերի